Աշխատանքի ծածկագիր 2286

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 25.11.2021թ.

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Գ.Հարությունյանի
մասնակցությամբ անդամներ՝
Տ.Մարկոսյանի
Լ.Գրիգորյանի

Քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 3-րդ և քաղաքացիական իրավունք բաժնի 7-րդ հարցերը:

Քաղաքացիական դատավարության բաժին

Հարց 3

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 186-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշտության համաձայնություն կնքելու դեպքում մեկական օրինակ տրվում է կողմերին, հաշտարարին, դատարանին: Հետևաբար, ելնելով կոնկրետ դեպքում կողմերի քանակից, տրված պատասխանը ճիշտ է: Ինչ վերաբերում է իրավասու մարմնի հնարավոր հաշվարկով ևս մեկ օրինակ նախատեսելու հանգամանքին, ապա նախ այդպիսի մոտեցումը չի բխում քաղաքացիական դատավարության օրենսդրությունից, քանի որ իրավասու մարմինը չի հանդիսանում դատավարության կողմ: Բացի այդ, պարզ չէ այդ մարմնին հաշտության համաձայնության օրինակը տրամադրելու նպատակը: Մյուս կողմից, կոնկրետ դեպքում 5 օրինակ նախատեսելը, եթե որևէ կերպ անհրաժեշտ էր նաև իրավասու մարմնին ևս մեկ օրինակ տալ, վիճելի է, քանի որ այն դեպքում, երբ կողմերը հաշվառված լինեն տարբեր վարչատարածքային միավորների տարածքում, իրավասու մարմինների քանակը կլինի երկուսը և ըստ այդմ ճիշտ պատասխան կարող էր լինել հաշտության համաձայնությունների 6 օրինակը:

Քաղաքացիական իրավունքի բաժին

Հարց 7

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի կողմից անվավեր ճանաչված ամուսնությունը չի առաջացնում սույն օրենսգրքով ամուսինների համար նախատեսված իրավունքներ և պարտականություններ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերի, իսկ նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին վճիռ կայացնելիս դատարանը կարող է ճանաչել ամուսնուց ապրուստի միջոց ստանալու՝ մյուս ամուսնու (բարեխիղճ ամուսնու) իրավունքը, որի իրավունքները խախտվել են նման ամուսնության կնքմամբ, իսկ մինչև ամուսնությունն անվավեր ճանաչելու պահը ձեռք բերված համատեղ գույքը բաժանելիս իրավունք ունի կիրառելու սույն օրենսգրքի 26-րդ հոդվածի նորմերը, ինչպես նաև լրիվ կամ մասնակիորեն վավեր ճանաչելու ամուսնական պայմանագիրը:

Հիշատակված դրույթների վերլուծությունից բխում է, որ ամուսնությունը անվավեր ճանաչելու ինքնաբերաբար հետևանք չէ ամուսնական պայմանագրի անվավերությունը, որը կոնկրետ գործի փաստերի հաշվառմամբ կարող է լրիվ կամ մասնակի վավեր ճանաչվել:

Նշյալ համատեքստում ընտրված պատասխանը ճիշտ չէ, քանի որ նոտարական վավերացմամբ գործարքի կնքման պայմաններում, երբ գործի փաստերում բացակայում է Ա-ի անբարեխղճության վերաբերյալ տվյալներ, ամուսանական պայմանագրի վավեր ճանաչումը չի բացառվում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 105.1-րդ հոդվածով, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի՝ 2021 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԲԴԽ-73-Ո-175 որոշմամբ հաստատված թիվ 4 հավելվածի 29-րդ կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 2286 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի՝ քաղաքացիական դատավարություն բաժնի 3-րդ հարցի «բ» պատասխանը համարել ճիշտ, իսկ բողոքը մնացած մասով մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆԱԽԱԳԱՀ՝ Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Տ.ՄԱՐԿՈՍՅԱՆ

Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ